Աշոտավան

Բնակչություն՝ 623

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 112 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 8 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1750 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Նախկին անվանումներն են Աղքենդ, Աղքյանդ, Խնոկ, Թազաքենդ, Կիրակոսիկ: ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանի առաջարկությամբ գնդապետ Աշոտ Սարգսյանի /1948թ./ հիշատակին վերանվանվել է Աշոտավան: Կիրակոսիկ անունով հիշատակվում է 13-րդ դարից: Ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ:
Ունի եկեղեցի /1903/, իսկ գյուղից 12կմ հարավ-արևմուտք գտնվում է Թանատի վանքը:
Այստեղ ծնվել են Հայրենական պատերազմի հերոս Աշոտ Սարգսյանը: Տոլորսի ջրամբարի կառուցման պատճառով գյուղը տեղափոխվել է նոր տեղ՝ հին տեղից 500մ հեռու:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 185 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 288 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 370 գլուխ,
- խոզեր՝ 34 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 320:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 110 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1229 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 899 հա, որից՝
- վարելահող՝ 432 հա, արոտ՝ 377 հա, այլ հողատեսք՝90 հա
- բնակավայրերի հողեր՝ 52 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 10 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝1 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 10 հա,
- անտառային հողեր՝ 94 հա, որից անտառածածկ՝ 94 հա
- ջրային հողեր՝ 163 հա